4-21

# УСТАВЪ АРМЯНСКАГО БЛАГОТВОРИТЕЛЬНАГО ОБЩЕСТВА НА КАВКАЗѢ.

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ՏՓԽԻՍ
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ՕՐԲԷԼԵԱՆ ՓՈՂՈՑ, [illegible]
1881

# УСТАВЪ
# АРМЯНСКАГО
## БЛАГОТВОРИТЕЛЬНАГО ОБЩЕСТВА
## НА КАВКАЗѢ.

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
# ՀԱՅՈՑ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
### ԿՈՎԿԱՍՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՓԽԻՍ
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1881

**На подлинномъ написано:**

„УТВЕРЖДАЮ“

Исправляющій должность Намѣстника Кавказскаго, Генералъ-Адъютантъ КНЯЗЬ МЕЛИКОВЪ.

*6-го Іюля 1881 года.*

Г. Тифлисъ.

# УСТАВЪ
## АРМЯНСКАГО БЛАГОТВОРИТЕЛЬНАГО ОБЩЕСТВА НА КАВКАЗѢ.

---

### ЦѢЛЬ ОБЩЕСТВА.

§ 1. Цѣль Общества состоитъ въ содѣйствіи къ распространенію, въ Кавказскомъ и Закавказскомъ краѣ, просвѣщенія между Армянами и въ оказаніи имъ матеріальной помощи.

§ 2. Для достиженія этой цѣли, Общество, по мѣрѣ развитія своихъ средствъ:

а) поддерживаетъ существующія армянскія школы и содѣйствуетъ матеріально открытію новыхъ;

1-1488ամ

ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱՅ ԳՐՈՒԱԾ Է՝

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

*Կովկասեան փոխարքայի Պաշտօնակատար, Գէնէրալ-Ադիւտանտ* ԻՇԽԱՆ ՄԷԼԻՔՈՎ

6 *Յուլիսի* 1881 *ամի:*

*Տփխիս*

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
## ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

---

### ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

*§ 1. Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածմանը Հայերի մէջ Կովկասում և Անդրկովկասում և օգնել նոցա նիւթականապէս:*

*§ 2. Այս նպատակին հասնելու համար Ընկերութիւնը, ըստ իւր ոյժերի զարգացման՝*

*ա) պահպանում է արդէն գոյութիւն ունեցող Հայոց ուսումնարանները և նիւթականապէս նպաստում է նորերը հիմնելուն.*

б) содѣйствуетъ распространенію ремеслъ въ народѣ;

в) помогаетъ учащимся въ дѣлѣ ихъ образованія;

г) печатаетъ книги и періодическія изданія для народнаго чтенія, а также и другія литературныя произведенія;

д) учреждаетъ типографіи, литографіи и библіотеки для чтенія;

в) учреждаетъ больницы и другія благотворительныя заведенія;

ж) помогаетъ страждущимъ во время народныхъ бѣдствій, какъ то: голода, эпидеміи, пожара и т. п., для чего, въ случаѣ нужды, снаряжаетъ отъ себя санитарные отряды или посылаетъ своихъ уполномоченныхъ;

з) имѣетъ право, въ необходимыхъ случаяхъ, помогать и другимъ обществамъ, учрежденнымъ для пользы Армянъ.

*Примѣчаніе.* По тѣмъ изъ вышеозначенныхъ предметовъ, по коимъ, на основаніи законовъ, требуется предварительное разрѣшеніе надлежащаго начальства, Общество приступаетъ къ осуществленію своихъ предпріятій, по полученіи сего разрѣшенія.



բ) օժանդակում է ժողովրդի մէջ արհեստների տարածմանը.

գ) օգնում է ուսանողներին իւրեանց ուսման ասպարէզի մէջ.

դ) լոյս է ընծայում գրքեր և պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար, նոյնպէս և այլ գրականական երկասիրութիւններ.

ե) հիմնարկում է տպարաններ, վիմագրատներ և ընթերցարաններ.

զ) հիմնարկում է հիւանդանոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ.

է) օգնում է տառապեալներին ժողովրդական թշուառութիւնների ժամանակ, որպիսիք են՝ սով, տարափոխիկ ախտ, հրդեհ և այլն: Այսպիսի դէպքերում, ըստ պահանջման հարկի, կազմում է առողջապահական մասնախմբեր, կամ ուղարկում է իւր կողմից հաւատարմատարներ.

ը) իրաւունք ունի կարեւոր դէպքերում նպաստել և այլ ազգօգուտ ընկերութիւններին:

*Ծանօթութիւն:* Վերոյիշեալ այն կէտերի վերաբերմամբ, որոնց մասին օրէնքով պահանջվում է կանխապէս ունենալ պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութիւնը, Ընկերութիւնը սկսում է իրագործել իւր ձեռնարկութիւնները այդ թոյլտուութիւնն ստանալուց յետոյ:

## СРЕДСТВА ОБЩЕСТВА.

§ 3. Средства Общества составляются изъ:

а) ежегодныхъ членскихъ взносовъ;

б) единовременныхъ пожертвованій деньгами, вещами и всякаго рода имуществомъ;

в) суммъ, выручаемыхъ отъ чтеній публичныхъ лекцій, устройства концертовъ, театральныхъ спектаклей и т. п., по примѣру другихъ обществъ, а также отъ продажи книгъ, періодическихъ изданій и вообще всякаго собственнаго имущества, по усмотрѣнію Общества.

## ПРАВА ОБЩЕСТВА.

§ 4. Общество, въ развитіи своей дѣятельности, пользуется законнымъ содѣйствіемъ всѣхъ правительственныхъ мѣстъ и лицъ.

§ 5. Общество можетъ выставлять, для сбора денегъ, кружки при церквахъ, по соглашенію съ армянскимъ духовенствомъ.

§ 6. Общество имѣетъ: особые печать и штемпель съ надписями: „АРМЯНСКОЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОЕ ОБЩЕСТВО НА КАВКАЗѢ.“

§ 7. Обществу предоставляется право, въ



## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 3. Ընկերութեան միջոցները կազմում են՝

ա) անդամների տարեկան վճարները.

բ) միանուագ նուէրներ դրամով, իրեղէններով և ամենատեսակ ստացուածքով.

գ) գումարներ, որոնք գոյանում են հրապարակական դասախօսութիւններից, երաժշտական հանդէսներից, թատրոնական ներկայացումներից և այլն, ըստ օրինակի այլ ընկերութեանց, նոյնպէս և գրքերի, պարբերական հրատարակութիւնների և առ հասարակ ամենատեսակ ստացուածքների վաճառումից, Ընկերութեան որոշման համաձայն:

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

§ 4. Ընկերութիւնը իւր գործունէութիւնը ընդլայնելու համար վայելում է ամեն կառավարչական հաստատութիւնների և անձանց օրինաւոր աջակցութիւնը:

§ 5. Ընկերութիւնը կարող է ունենալ հանգանակութեան տուփեր եկեղեցիների մէջ հայոց հոգևոր իշխանութեան համաձայնութեամբ:

§ 6. Ընկերութիւնն ունի առանձին կնիք և դրոշմ այս վերնագրով՝ «ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»

§ 7. Ընկերութիւնը կարևոր դէպքերում

случаѣ надобности, дополнять или измѣнять настоящій уставъ, съ разрѣшенія подлежащаго начальства.

## СОСТАВЪ ОБЩЕСТВА.

§ 8. Общество состоитъ изъ членовъ:
а) почетныхъ,
б) пожизненныхъ и
в) дѣйствительныхъ.

Всѣ эти званія присвоиваются лицамъ обоего пола. Число членовъ не ограничено.

§ 9. Членами почетными могутъ быть избраны лица, оказавшія Обществу особенныя услуги. Избраніе это производится, по представленію Совѣта, общимъ собраніемъ Общества.

§ 10. Членами пожизненными признаются лица, пожертвовавшія Обществу единовременно не менѣе *трехъ сотъ* рублей.

§ 11. Званіе дѣйствительнаго члена носятъ всѣ платящіе *пять* рублей ежегодно.

§ 12. На званія членовъ почетныхъ выдаются Обществомъ дипломы за надлежащими подписями и приложеніемъ печати.

§ 13. Члены всѣхъ наименованій пользуются правомъ голоса на всѣхъ общихъ собра-



իրաւունք ունի լրացնել կամ փոփոխել սոյն այս կանոնադրութիւնը պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ:

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

§ 8. Ընկերութիւնը կազմում են՝
ա) պատուաւոր,
բ) մշտական և
գ) գործադիր անդամները:

Այս կոչումները կրում են երկու սեռի անձինք էլ: Անդամների թիւը սահմանափակած չէ:

§ 9. Պատուաւոր անդամներ կարող են ընտրուել Ընկերութեանը առանձին ծառայութիւններ ցոյց տուող անձինք: Այդ ընտրութիւնը կատարում է Ընկերութեան ընդհանուր ժողովը, Խորհրդի առաջարկութեամբ:

§ 10. Մշտական անդամներ համարվում են Ընկերութեանը միանուագ ոչ պակաս քան երեք հարիւր րուբլի նուիրող անձինք:

§ 11. Գործադիր անդամի կոչումն կրում են տարեկան հինգ րուբլի վճարողները:

§ 12. Պատուաւոր անդամներին տրվում է Ընկերութիւնից պատշաճաւորապէս ստորագրուած և կնքով դրոշմած վկայաթղթեր:

§ 13. Բոլոր անդամները, ինչ կոչման և սեռին, ունին ձայնի իրաւունք ընդհանուր ժողով-

ніяхъ, гдѣ бы они ни происходили, при личномъ ихъ присутствіи въ тѣхъ собраніяхъ.

§ 14. Члены Общества уплачиваютъ свои взносы при самомъ ихъ вступленіи въ члены Общества. Порядокъ поступленія, какъ ежегодныхъ, такъ и единовременныхъ взносовъ, опредѣленъ ниже въ § 28.

§ 15. Члены, не внесшіе своихъ взносовъ въ теченіи четырехъ мѣсяцевъ, считаются выбывшими и затѣмъ принимаются снова при возобновленіи взноса.

## АДМИНИСТРАЦІЯ ОБЩЕСТВА.

§ 16. Завѣдываніе дѣлами Общества возлагается на Совѣтъ общества и мѣстныя управленія. Совѣтъ находится въ Тифлисѣ, а мѣстныя управлевія въ другихъ городахъ и мѣстностяхъ Кавказскаго и Закавказскаго края, гдѣ къ тому представится возможность и Совѣтъ найдетъ это полезнымъ (§ 18).

§ 17. Кромѣ означенныхъ въ § 16 Совѣта и управленій, для успѣшнѣйшаго развитія Общества по разнымъ отраслямъ его дѣятельности, образуются мѣстные комитеты въ мѣстностяхъ малонаселенныхъ и гдѣ нѣтъ возможности открывать мѣстнаго управленія.



ների մէջ, ուր և կայանան այդ ժողովները, եթէ միայն անձամբ ներկայ են այնտեղ։

§ 14. Ընկերութեան անդամները հատուցանում են իւրեանց վճարը նոյն իսկ անդամ գրուելիս։ Տարեկան և միանուագ վճարների եղանակը որոշուած է 28-դ §ում։

§ 15. Այն անդամները, որոնք չորս ամսուայ ընթացքում չեն հատուցել իւրեանց տարեկան վճարը, հրաժարուած են համարվում և կրկին ընդունվում են, երբ վերստին նորոգում են նոյն վճարը։

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

§ 16. Ընկերութեան գործերը վարում են՝ Ընկերութեան Խորհուրդը և տեղական վարչութիւնները։ Խորհուրդը գտնվում է Տփխիսում, իսկ տեղական վարչութիւնները Կովկասի և Անդրկովկասի այլ քաղաքներում և տեղերում, ուր այդ հնարաւոր կլինի և խորհուրդն օգտաւէտ կըհամարէ (§18)։

§ 17. Բացի նախընթաց 16-դ §-ի մէջ նշանակուած Խորհուրդը և տեղական վարչութիւնները, Ընկերութեան յաջողակ զարգացման համար՝ նորա գործունէութեան զանազան ճիւղերի մէջ, կազմվում են տեղական մասնաժողովներ սակաւաբնակ տեղերում և ուր անկարելի է բանալ տեղական վարչութիւն։

§ 18. Мѣстныя управленія образуются, когда число членовъ обоего пола всѣхъ наименованій достигаетъ до 15-ти и когда на открытіе своихъ дѣйствій получатъ разрѣшеніе Совѣта Общества. Мѣстные же комитеты открываются безъ опредѣленнаго числа членовъ, по испрошеніи на то, чрезъ мѣстныя управленія, согласія Совѣта. Тамъ, гдѣ нѣтъ мѣстнаго управленія, согласіе Совѣта можетъ быть испрошено непосредственно.

§ 19. Мѣстныя управленія и комитеты, по воспослѣдованіи разрѣшеній Совѣта на открытіе ихъ дѣйствій, сообщаютъ о томъ мѣстной административной власти.

§ 20. Всѣ члены администраціи Общества, какъ въ Тифлисѣ, такъ и внѣ Тифлиса, исполняютъ свои обязанности безвозмездно, за исключеніемъ случаевъ, признаваемыхъ Совѣтомъ Общества подлежащими вознагражденію.

§ 21. Обязанность всѣхъ органовъ Общества заключается въ развитіи его дѣятельности, въ приращеніи средствъ и въ возможномъ сбереженіи оныхъ, съ избѣжаніемъ всякихъ излишнихъ расходовъ. Составъ сихъ органовъ и кругъ ихъ занятій изложенъ въ нижеслѣдующихъ §§.



§ 18. Տեղական վարչութիւնները կազմվում են՝ երբ երկու սեռի ամենատեսակ անդամների թիւը 15-ի է հասնում և երբ իւրեանց գործողութիւններն սկսելու համար Խորհրդից թոյլտուութիւն են ստանում: Իսկ տեղական մասնաժողովները բացվում են, որքան անդամ և ունենան, երբ տեղական վարչութիւնների միջնորդութեամբ այդ մասին իրաւունք են ստանում Խորհրդից: Ուր որ տեղական վարչութիւն չկայ, Խորհրդի համաձայնութիւնը կարելի է ստանալ անմիջապէս:

§ 19. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները՝ ստանալով Խորհրդից իւրեանց գործողութիւնն սկսելու թոյլտուութիւնը, հաղորդում են այդ մասին տեղական իշխանութեանը:

§ 20. Ընկերութեան վարչութիւնների բոլոր անդամները, թէ Տփխիսում և թէ Տփխիսից դուրս, ձրի են կատարում իւրեանց պարտաւորութիւնները, բացի այն դէպքերից, որոնք Ընկերութեան Խորհուրդը վարձատրութեան արժանի կըգտնէ:

§ 21. Ընկերութեան բոլոր գործիչների պարտաւորութիւնն է՝ զարգացնել նորա գործունէութիւնը, աճեցնել նորա միջոցները և որքան հնարաւոր է խնայողութիւն պահպանել, զգուշանալով աւելորդ ծախքերից: Այս գործիչների կազմակերպութիւնը և նորանց պարապմունքների շրջանը բացատրուած է հետևեալ §§-ներում:

## СОВѢТЪ ОБЩЕСТВА.

§ 22. Совѣтъ завѣдываетъ всѣми дѣлами Общества.

§ 23. Совѣтъ состоитъ изъ избираемыхъ общимъ собраніемъ въ Тифлисѣ *девяти* членовъ и *пяти* къ нимъ кандидатовъ. Эти *девять* членовъ избираютъ изъ среды себя предсѣдателя и товарища его, на случай отсутствія перваго.

§ 24. Совѣтъ избираетъ изъ среды себя или другихъ членовъ Общества, подъ свою отвѣтственность, дѣлопроизводителя и казначея.

§ 25. Срокъ служенія предсѣдателя и членовъ Совѣта двухлѣтній. Чрезъ каждый годъ половина членовъ Совѣта выбываетъ по очереди и замѣщается вновь избираемыми, которыми могутъ быть и выбывшіе.

*Примѣчаніе.* Чрезъ первый годъ по введеніи въ дѣйствіе настоящаго устава, половина членовъ Совѣта выбываетъ по жребію.

§ 26. Совѣтъ, какъ центральное учрежденіе всего Общества, направляетъ всѣ его дѣйствія къ надлежащему единству и соотвѣтственно цѣли его назначенія.



## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ.

§ 22. Խորհուրդը վարում է Ընկերութեան բոլոր գործերը։

§ 23. Խորհուրդը կազմվում է Տփխիսի ընդհանուր ժողովից ընտրուած ինն անդամներից և հինգ փոխ-անդամներից։ Այդ ինն անդամները ընտրում են իւրեանց միջից նախագահ և փոխ-նախագահ, որը վարելու է առաջինի պաշտօնը՝ նորա բացակայութեան ժամանակ։

§ 24. Խորհուրդը իւր պատասխանատուութեան ներքոյ ընտրում է իւր միջից կամ Ընկերութեան միւս անդամներից մի քարտուղար և մի գանձապահ։

§ 25. Խորհրդի նախագահը և անդամները ընտրվում են երկու տարով։ Ամեն տարուայ վերջում Խորհրդի անդամների կէսը թողնում է իւր պաշտօնը հերթով, իսկ նոցա տեղերը բռնում են նոր ընտրվածները, որոնք կարող են լինել և դուրս գնացողներից։

*Ծանօթութիւն։* Այս կանոնադրութեան գործադրութեան օրից մի տարի յետոյ՝ Խորհրդի անդամների կէսը հեռանում է վիճակով։

§ 26. Խորհուրդն, իբրև Ընկերութեան կենդրոնական հիմնարկութիւն, ղեկավարում է նորա բոլոր գործողութիւնները դէպի պատշաճաւոր միութիւն, համապատասխան նորա գոյութեան նպատակին։

§ 27. Совѣтъ сосредоточиваетъ у себя всѣ свѣдѣнія о капиталахъ, имуществѣ и прочихъ средствахъ мѣстныхъ управленій и комитетовъ и распоряжается этими средствами согласно смѣтныхъ исчисленій, или по опредѣленіямъ общаго собранія.

§ 28. Совѣтъ принимаетъ членскіе взносы и денежныя пожертвованія, записывая ихъ въ особыя книги, съ выдачею вырѣзанной изъ книги квитанціи, за подписью казначея.

§ 29. Суммы, поступающія какъ въ Совѣтъ, такъ и въ мѣстныя управленія и мѣстные комитеты, по назначенію своему, подраздѣляются на *три* рода:

а) *Расходныя* суммы, предназначаемыя на текущіе расходы по Обществу;

б) *Неприкосновенный* капиталъ, на образованіе котораго ежегодно откладывается *пять* процентовъ изъ доходовъ Общества за вычетомъ текущихъ расходовъ;

в) *Спеціальныя* суммы, жертвуемыя для особыхъ, опредѣляемыхъ самими жертвователями, назначеній.

*Примѣчаніе.* Спеціальныя суммы, жертвуемыя для особыхъ цѣлей, могутъ быть расходуемы только тогда, когда ими обезпечиваются указанныя жертвователями назначенія; въ противномъ случаѣ суммы эти хра-



§ 27. Խորհուրդը կենդրոնացնում է իւր մէջ տեղական վարչութիւնների և մասնաժողովների կայքի, դրամագլուխների և այլ միջոցների վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները և կարգադրում է այդ միջոցները իւր նախահաշուին կամ ընդհանուր ժողովի վճիռներին համաձայն:

§ 28. Խորհուրդը ընդունում է անդամների վճարները և դրամական նուէրները, մուծանելով այդ առանձին մատեանների մէջ և տալով նոցանից կտրած անդորրագիր գանձապահի ստորագրութեամբ:

§ 29. Խորհրդարանը, տեղական վարչութիւնները և տեղական մասնաժողովները մտնող գումարները, ըստ իւրեանց նշանակութեան, բաժանվում են *երեք* տեսակի՝

ա) *Ծախսոց* գումարներ, որոնք Ընկերութեան ընթացիկ ծախքերի համար են որոշուած:

բ) *Անշօշափելի* գումար, որը կազմելու համար պահվում է ամենայն տարի Ընկերութեան եկամուտներից *հինգ* տոկոս, հանելով կանխապէս ընթացիկ ծախքերը:

գ) *Յատուկ* գումարներ, որոնք նուիրողի կողմից մի առանձին որոշ նպատակի են յատկացրած:

*Ծանօթութիւն:* Յատուկ գումարները, որոնք առանձին նպատակների են յատկացրած, կարող են ծախսուել միայն այն ժամանակ, երբ նորանցով միանգամայն ապահովվում են նուիրատուներից նախագծուած

нятся неприкосновенно, покуда не образуются достаточныя средства, вполнѣ обезпечивающія назначенія. Спеціальныя суммы показываются въ отчетѣ Совѣта отдѣльно отъ другихъ суммъ.

§ 30. Къ концу каждаго года Совѣтъ составляетъ смѣту на предстоящіе годовые расходы по Обществу и смѣту эту представляетъ на утвержденіе общаго собранія въ Тифлисѣ къ 15 Декабря (§ 44).

§ 31. Поступающія въ Совѣтъ суммы вносятся въ государственный или частные банки на вклады до востребованія, или на текущій счетъ, смотря по тому, что признается болѣе выгоднымъ, избѣгая по возможности храненія при Совѣтѣ денегъ свыше *пяти сотъ* рублей.

§ 32. Совѣту предоставляется:

а) заключать всякаго рода договоры и условія въ предѣлахъ предоставленной ему власти,

и б) вчинать, гдѣ слѣдуетъ, иски по дѣламъ Общества и защищать его интересы, чрезъ своихъ повѣренныхъ, на что и снабжать ихъ особою отъ себя довѣренностію.

§ 33. Совѣтъ сносится по дѣламъ Общества со всѣми правительственными и общественными учрежденіями.



գործադրութիւնները։ Հակառակ դէպքում այդ գումարները անձեռնմխելի են պահվում, մինչև որ կազմուին բաւարար և նպատակները ամբողջապէս ապահովացնող միջոցներ։ Յատուկ գումարները Խորհրդի հաշուի մէջ միւս գումարներից առանձին են նշանակվում։

§ 30. Իւրաքանչիւր տարուայ վերջին Խորհուրդը կազմում է նախահաշիւ Ընկերութեան յաջորդ տարուայ ծախուց համար և այդ նախահաշիւը առաջարկում է Տփխիսում ընդհանուր ժողովի հաստատութեանը ց15-ն Դեկտեմբերի (§ 44)։

§ 31. Խորհրդարանը մտնող գումարները տըրվում են պետական կամ մասնաւոր բանկեր ցպահանջումն կամ ընթացիկ հաշուով, նայելով թէ որն է աւելի օգտաւէտ և աշխատելով որքան կարելի է Խորհրդարանում պահել ոչ աւելի քան հինգ հարիւր րուբլի։

§ 32. Խորհուրդն ունի իրաւունք՝

ա) իւրեան տուած իշխանութեան սահմանների մէջ կապել ամենատեսակ պայմաններ և դաշինքներ,

և բ) դատ բանալ՝ ուր հարկն է, Ընկերութեան գործերի վերաբերութեամբ և պաշտպանել նորա շահերը իւր հաւատարմատարների ձեռքով, որի համար և տալ նոցա իւր կողմից առանձին հաւատարմաթուղթ։

§ 33. Ընկերութեան գործերի վերաբերութեամբ Խորհուրդը հաղորդակցում է բոլոր կառավարչական և հասարակական հիմնարկութիւնների հետ։

§ 34. Занятія Совѣта непрерывны; дни же засѣданій его опредѣляются сообразно необходимости.

§ 35. Для дѣйствительности рѣшеній, въ засѣданіяхъ Совѣта необходимо присутствіе не менѣе *пяти* членовъ, въ томъ числѣ и предсѣдателя или заступающаго его мѣсто товарища; при отсутствіи же кого либо изъ этихъ членовъ, приглашаются предсѣдателемъ кандидаты по очереди.

§ 36. Рѣшенія постановляются по большинству голосовъ, при равенствѣ коихъ голосъ предсѣдателя, или заступающаго его мѣсто товарища, даетъ перевѣсъ. Рѣшенія эти приводятся въ исполненіе предсѣдателемъ, за скрѣпою дѣлопроизводителя.

§ 37. Всѣ акты и обязательства по дѣламъ Общества, а также требованія суммъ изъ кредитныхъ установленій и вообще отъ мѣстъ, которымъ можетъ быть довѣрено храненіе капиталовъ Общества, равно какъ и переводы суммъ, принадлежащихъ Обществу, должны быть подписаны предсѣдателемъ, или заступающимъ его мѣсто, и двумя членами Совѣта, за скрѣпою дѣлопроизводителя.

§ 38. Для руководства мѣстныхъ управленій и комитетовъ, Совѣтъ составляетъ, въ предѣлахъ сего устава, особыя инструкціи (§ 48),



§ 34. Խորհրդի պարապմունքներն անընդհատ են, իսկ նորա նիստերի օրերը որոշվում են ըստ պահանջման հարկի:

§ 35. Որպէս զի Խորհրդի վճիռներն օրինաւոր համարուին, անհրաժեշտ է ոչ պակաս քան հինգ անդամների ներկայութիւնը. սոցա թւումն է և նախագահը կամ փոխ-նախագահը: Այս անդամներից որ և իցէ մէկի բացակայութեան դէպքում, նախագահը հրաւիրում է փոխ-անդամներին հերթով:

§ 36. Վճիռները կայանում են ձայների առաւելութեամբ, որոնց հաւասարութեան դէպքում նախագահի կամ նորա փոխանորդի ձայնը տալիս է առաւելութիւն: Այդ վճիռները գործադրվում են նախագահի ստորագրութեամբ և քարտուղարի վաւերացմամբ:

§ 37. Ընկերութեան գործերին վերաբերեալ բոլոր արձանագրութիւնները և պայմանագրերը, նոյնպէս գումարների պահանջումը փոխատու հիմնարկութիւններից և առհասարակ այն տեղերից, որոնց յանձնուած է Ընկերութեան դրամագլխի պահպանութիւնը, նմանապէս և Ընկերութեանը պատկանեալ գումարների փոխադրութիւնը պէտք է ստորագրեն նախագահը և Խորհրդի երկու անդամները, քարտուղարի վաւերացմամբ:

§ 38. Տեղական վարչութիւնների և մասնաժողովների համար իբրև ձեռնարկ Խորհուրդը կազմում է, սոյն այս կանոնագրութեան սահմաննե-

которыя подлежатъ разсмотрѣнію и утвержденію общаго собранія.

§ 39. Совѣтъ опредѣляетъ порядокъ своего дѣлопроизводства. Онъ распредѣляетъ занятія членамъ, а для разрѣшенія спеціальныхъ вопросовъ избираетъ отдѣльныя коммиссіи изъ членовъ Общества, или же приглашаетъ другихъ спеціалистовъ.

§ 40. Совѣтъ имѣетъ печать съ своимъ наименованіемъ и снабжаетъ мѣстныя управленія и комитеты образцами печатей и формами книгъ для записыванія денежныхъ сборовъ и матеріальныхъ пожертвованій.

§ 41. Ежегодно, по полученіи отчетовъ мѣстныхъ управленій и комитетовъ за истекшій годъ, Совѣтъ составляетъ общій отчетъ о дѣятельности всѣхъ óрграновъ Общества, о приходѣ и расходѣ суммъ Общества и о состояніи имущества. Затѣмъ предлагаетъ отчетъ сей на разсмотрѣніе общаго собранія къ 15 Мая (§ 44).

## ОБЩІЯ СОБРАНІЯ.

§ 42. Общее собраніе имѣетъ своего предсѣдателя и секретаря, ежегодно избираемыхъ самимъ собраніемъ.



րեց դուրս չգալով, առանձին հրահանգներ (§ 48), որոնք պէտք է ենթարկուեն ընդհանուր ժողովի վերահայեցողութեանը և հաստատութեանը:

§ 39. Խորհուրդը որոշում է իւր գործավարութեան եղանակը: Նա բաժանում է պարապմունքները անդամների մէջ, իսկ մասնագիտական հարցերը վճռելու համար ընտրում է առանձին յանձնաժողովներ Ընկերութեան անդամներից կամ հրաւիրում է այլ մասնագէտներ:

§ 40. Խորհուրդն ունի կնիք իւր յատուկ անուանակոչութեամբ և յանձնում է տեղական վարչութիւններին և մասնաժողովներին կնիքների ձևեր և մատեանների օրինակներ՝ դրամական վճարները և նիւթական նուէրները գրելու համար:

§ 41. Իւրաքանչիւր տարի տեղական վարչութիւններից և մասնաժողովներից նախընթաց տարուայ հաշիւները ստանալուց յետոյ՝ Խորհուրդը կազմում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան բոլոր գործիչների աշխատութեան, գումարների մուտքի և ելքի և կայքերի դրութեան մասին և այս հաշիւը առաջարկում է ընդհանուր ժողովի վերաքննութեանը ց15-ն Մայիսի (§ 44):

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

§ 42. Ընդհանուր ժողովն ունի իւր նախագահը և քարտուղարը, որոնք իւրաքանչիւր տարի ընտրվում են այդ իսկ ժողովից:

§ 43. Общія собранія созываются въ Тифлисѣ, чрезъ публикаціи въ мѣстныхъ газетахъ, *два раза* въ годъ: *15 Мая*, для разсмотрѣнія отчета, и *15 Декабря*, для разсмотрѣнія смѣты. Но, кромѣ того, Совѣтъ созываетъ чрезвычайныя собранія всегда, когда признаетъ это необходимымъ, или когда въ Совѣтъ поступитъ заявленіе, подписанное не менѣе какъ *одною тридцатою* частью числа тифлисскихъ членовъ, публикуя предварительно, каждый разъ, о предметахъ занятій.

Общее собраніе считается состоявшимся, когда въ немъ присутствуетъ не менѣе *одной двадцатой* части числа тѣхъ же членовъ; въ противномъ случаѣ, чрезъ *восемь* дней послѣ несостоявшагося засѣданія, созывается вторичное собраніе, для котораго уже не требуется опредѣленнаго числа членовъ. Разсмотрѣнію этого послѣдняго собранія подлежатъ только тѣ дѣла и вопросы, которые входили въ программу занятій перваго несостоявшагося собранія.

§ 44. Къ кругу занятій общаго собранія принадлежатъ:

а) Разсмотрѣніе общаго отчета Совѣта. При этомъ, для повѣрки прихода и расхода суммъ въ Совѣтѣ и вообще состоянія капиталовъ, въ вѣдѣніи его находящихся, избирается изъ среды собранія повѣрочная коммисія не



§ 43. Ընդհանուր ժողովները հրաւիրվում են Տփխիսում, տեղական լրագիրների միջոցաւ, տարէնը երկու անգամ՝ Մայիսի 15-ին հաշուի, և Դեկտեմբերի 15-ին նախահաշուի քննութեան համար: Բացի սորանից Խորհուրդը հրաւիրում է արտաքոյ կարգի ժողովներ ամենայն ժամանակ, երբ նա անհրաժեշտ կըհամարէ այդ, կամ երբ Խորհուրդը կըստանայ յայտարարութիւն ոչ պակաս քան Տփխիսի անդամների թուի մէկ երեսներորդից ստորագրուած, իւրաքանչիւր անգամ կանխապէս հրատարակելով պարապմունքների առարկաները:

Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, երբ նորա մէջ ներկայ են գտնվում ոչ պակաս քան նոյն անդամների թուի մի քսաներորդական մասը, հակառակ դէպքում չկայացած նստից ութ օր յետոյ հրաւիրվում է երկրորդ ժողով, որի համար այլ ևս չէ պահանջվում անդամների որ և է սահմանեալ թիւ: Վերջին ժողովի քննութեանը ենթարկվում են միայն այն գործերն ու հարցերը, որոնք մտած էին առաջին չկայացած ժողովի պարապմունքների ծրագրի մէջ:

§ 44. Ընդհանուր ժողովի պարապմունքներին ենթարկվում են՝

ա) Խորհրդի ընդհանուր հաշուի քննութիւնը: Այս դէպքում Խորհրդի գումարների մտից և ելից և առ հասարակ նորա հսկողութեան ներքոյ գտնուող դրամագլուխների ստուգութեան համար ընտրվում է ժողովի միջից վերաստուգող

менѣе какъ изъ *трехъ* лицъ, не принадлежащихъ къ составу Совѣта, которымъ и даются необходимыя на этотъ предметъ инструкціи.

б) Разсмотрѣніе и утвержденіе инструкціи Совѣта мѣстнымъ управленіямъ и комитетамъ.

в) Разсмотрѣніе и утвержденіе смѣтъ, какъ Совѣта, такъ и мѣстныхъ управленій и комитетовъ.

г) Обсужденіе различныхъ вопросовъ и мѣръ, предлагаемыхъ Совѣтомъ и мѣстными управленіями чрезъ Совѣтъ.

д) Признаніе лицъ въ званіи почетныхъ членовъ Общества.

е) Выборъ членовъ Совѣта.

ж) Утвержденіе предположеній о пріобрѣтеніи и отчужденіи недвижимыхъ имуществъ.

з) Измѣненіе устава.

и) Закрытіе Общества.

Члены, желающіе сдѣлать общему собранію какое либо предложеніе, должны представить его Совѣту, на предварительное разсмотрѣніе, по меньшей мѣрѣ за *восемь* дней до засѣданія общаго собранія.

§ 45. Всѣ дѣла въ общемъ собраніи рѣшаются по большинству голосовъ; при равен-



յանձնաժողով՝ բաղկացած ոչ պակաս քան երեք անձինքներից, որոնք Խորհրդի անդամ չպիտի լինին և որոնց տրվում են այդ առարկաների մասին հարկաւոր եղած հրահանգները:

բ) Տեղական վարչութիւնների և մասնաժողովների համար Խորհրդից կազմուած հրահանգների քննութիւնը և հաստատութիւնը:

գ) Խորհրդի, տեղական վարչութիւնների և մասնաժողովների նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը:

դ) Լուծումն զանազան հարցերի, որոնք առաջարկվում են կամ Խորհրդից, կամ տեղական վարչութիւններից Խորհրդի միջնորդութեամբ:

ե) Պատուաւոր անդամութեան կոչումն յատկացնելը:

զ) Խորհրդի անդամների ընտրութիւնը:

է) Անշարժ կայքեր գնելուն և օտարացուցանելուն վերաբերեալ յառաջադրութիւնների հաստատութիւնը:

ը) Կանոնագրութեան փոփոխութիւնը:

թ) Ընկերութեան խափանումն:

Ընդհանուր ժողովին որ և իցէ առաջարկութիւն ներկայացնել ցանկացող անդամները պարտաւոր են այդ առաջարկութիւնը ենթարկել Խորհրդին կանխապէս վերաքննելու՝ ընդհանուր ժողովի նիստից առ նուազն ութ օր առաջ:

§ 45. Ընդհանուր ժողովի մէջ բոլոր գործերը վճռվում են ձայների առաւելութեամբ,

ствѣ же ихъ, голосъ предсѣдателя даетъ перевѣсъ, за исключеніемъ вопросовъ, касающихся выборовъ членовъ Совѣта и измѣненія устава Общества, которые рѣшаются *двумя третями* голосовъ.

По вопросу же о закрытіи Общества необходимо рѣшеніе *двухъ третей* числа всѣхъ членовъ Общества. Въ этомъ послѣднемъ случаѣ, Совѣтъ предварительно извѣщаетъ мѣстныя управленія, какъ офиціально, такъ и посредствомъ публикаціи въ газетахъ, дабы управленія эти доставили Совѣту рѣшенія своихъ общихъ собраній по настоящему предмету съ присовокупленіемъ свѣдѣнія о числѣ членовъ, высказавшихся за закрытіе Общества.

§ 46. Общій отчетъ Совѣта, съ заключеніемъ повѣрочной коммисіи, по расмотрѣніи и утвержденіи ихъ общимъ собраніемъ, публикуется въ мѣстныхъ армянскихъ газетахъ.

## МѢСТНЫЯ УПРАВЛЕНІЯ И КОМИТЕТЫ.

§ 47. Мѣстныя управленія и комитеты, образуемые Совѣтомъ, согласно §§ 16, 17 и 18, завѣдуютъ всѣми дѣлами Общества въ предѣ-



Իսկ երբ նոքա հաւասար են, նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս, բացառութեամբ այն հարցերի, որոնք վերաբերում են Խորհրդի անդամների ընտրութեան և կանոնագրութեան փոփոխման. նոքա վճռւում են ձայների երկու-երրորդական առաւելութեամբ:

Ընկերութեան խափանման հարցի վերաբերմամբ անհրաժեշտ է Ընկերութեան բոլոր անդամների երկու-երրորդական վճիռը: Այս վերջին դէպքում Խորհուրդը թէ լրագրութեան միջոցով և թէ պաշտօնական յայտարարութիւններով կանխապէս ազդարարում է տեղական վարչութիւններին, որպէս զի նոքա իւրեանց ընդհանուր ժողովների վճիռներն ուղարկեն Խորհրդին, որոշելով Ընկերութեան խափանումն ցանկացողների թիւը:

§ 46. Խորհրդի ընդհանուր հաշիւը՝ վերստուգող յանձնաժողովի զեկուցման հետ, ընդհանուր ժողովի վերահայեցողութիւնից և հաստատութիւնից յետոյ, հրատարակւում է տեղական հայ լրագիրներում:

## ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐ

§ 47. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները, որոնց կազմում է Խորհուրդը համաձայն 16-դ, 17-դ և 18-դ §§-ների, վարում են

лахъ ихъ раіона.

*Примѣчаніе.* Предѣлы раіоновъ опредѣляются Совѣтомъ.

§ 48. Мѣстныя управленія и комитеты, въ отношеніи организаціи администраціи, порядка дѣлопроизводства, составленія смѣтъ и отчётовъ, веденія отчетности, созванія общихъ собраній, опредѣленія круга и предметовъ занятій, дѣйствуютъ на точномъ основаніи особой инструкціи Совѣта (§ 38 и пунк. б § 44).

§ 49. Мѣстныя управленія и комитеты, изъ суммъ, находящихся въ ихъ распоряженіи, оставляютъ у себя необходимую сумму на текущіе расходы, согласно смѣтному назначенію; остальную же неотлагательно посылаютъ въ Совѣтъ.

## ЗАКРЫТІЕ ОБЩЕСТВА.

§ 50. Если Общество, по какимъ либо обстоятельствамъ, прекратитъ свое существованіе, то всѣ остающіеся капиталы и имущества Общества обращаются на полезныя для Армянъ дѣла, по рѣшенію *двухъ третей* числа всѣхъ членовъ Общества (§ 45).



Ընկերութեան բոլոր գործերը իւրեանց վիճակի սահմանների մէջ։

Ծանօթութիւն։ Վիճակի սահմանները որոշում է Խորհուրդը։

§ 48. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները՝ վարչական կազմակերպութեան, գործավարութեան եղանակի, նախահաշիւ և հաշիւներ կազմելու, հաշուեպահութեան, ընդհանուր ժողովներ կայացնելու, պարապմունքների շրջանը և նոցա նիւթերը որոշելու վերաբերութեամբ, գործում են Խորհրդից տուած առանձին հրահանգի ճիշդ հիման վերայ (§ 38 և բ բաժանումն 44-դ §-ի)։

§ 49. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները իւրեանց կարգադրութեան ներքոյ գտնուող գումարներից հարկաւոր մասը թողնում են ընթացիկ ծախքերի համար, նախահաշուի որոշման համաձայն, իսկ մնացորդը առանց յետաձգութեան ուղարկում են Խորհրդին։

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽԱՓԱՆՈՒՄՆ

§ 50. Եթէ որ և է պատճառով Ընկերութիւնը դադարեցնէ իւր գոյութիւնը, Ընկերութեան բոլոր մնացած դրամագլուխն ու կայքը գործ են դրվում ազգօգուտ գործերի վերայ, Ընկերութեան բոլոր անդամների երկու երրորդականի վճռին համաձայն (§ 45)։

Дозволено Начальствомъ. Тифлисъ, 30 Іюля 1881 г.

Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул., 5

-1800

ՀՀ Ազգային գրադարան

NL1471653

10

I

1488

ԳԻՆՆ Է 10 Կ.